# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 ՀՈՒՆԻՍԻ 2021 թվականի N 206-Ա

### ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. N 2387-Ն որոշման 29-րդ, 48-րդ կետերով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով ***որոշում եմ՝***

1. ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ 0.01309 հա մակերեսով, 06-002-0273-0010 ծածկագրով հողամասին տրամադրել մարզ Լոռի, համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Ակներ թաղամաս, հողամաս N 273/10 փոստային հասցե:
2. ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ 0.00865 հա մակերեսով, 06-002-0274-0026 ծածկագրով հողամասին տրամադրել մարզ Լոռի, համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Ակներ թաղամաս, հողամաս N 274/26 փոստային հասցե:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝** **ԱՐԹՈՒՐ ՎԱՐՈՍՅԱՆ**

2021թ. հունիսի 25
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՀՈՒՆԻՍԻ 2021 թվականի N 207-Ա

### 06-002-0057-0005 ԾԱԾԿԱԳՐՈՎ, ՆԱԻՐԱ ԳԱԳԻԿԻ ՄԻԿՈՅԱՆԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ 0.07348 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԵՆՔԻ ՈՒԺՈՎ ՍԵՓԱԿԱՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության 50-Ն օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Նաիրա Գագիկի Միկոյանի դիմումը, անձնագրի պատճենը, ժառանգության իրավունքի վկայագիրը, 28.05.1986 թվականին կազմված գույքային թերթը, «ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

1. Վերականգնել Նաիրա Գագիկի Միկոյանին ժառանգության իրավունքով պատկանող, Ալավերդի համայնքի Սանահին թաղամասում գտնվող, 06-002-0057-0005 ծածկագրով բնակելի տան և 0.07348 հա մակերեսով տնամերձ հողամասի հողհատկացման հիմքերը, սեփականության իրավունքը:
2. Ալավերդի համայնքի Սանահին թաղամասում գտնվող բնակելի տանը տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին թաղամաս, փողոց 2, N 31/1 փոստային հասցե:

3. Նշված հողամասում գտնվող, այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացրած և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող՝ 1987թ. կառուցված բաց պատշգամբով բնակելի տունը, անասնագոմը, պարիսպը Հայաստանի Հանրապետության կառավարության 50-Ն օրենքով համարել Նաիրա Գագիկի Միկոյանի (ծնված՝ 06.01.1992թ.) սեփականությունը:
4. Անշարժ գույքի զբաղեցրած հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
5. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
6. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝ ԱՐԹՈՒՐ ՎԱՐՈՍՅԱՆ

2021թ. հունիսի 25
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՀՈՒՆԻՍԻ 2021 թվականի N 208-Ա

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ, 5-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 731-Ն, 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 33-րդ, 34-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության 19.11.2019թ. N 1023 օրենքով, հաշվի առնելով, որ ինքնակամ կառուցված բնակելի նշանակության ավտոտնակը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, պահպանում է քաղաքաշինական նորմերը, հիմք ընդունելով «ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ» ՍՊ ընկերության կողմից կազմված հողամասի և շինության հատակագծերը, «Թիվ 1 ԲԾՏ» ՓԲ ընկերության կողմից 30.03.2021թ. տրված թիվ 0-50 տեղեկանքը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ***՝

1. Ալավերդի քաղաքի Ջրավազան փողոցի արևելյան մասում գտնվող, ինքնակամ կառուցված, 28.0 քմ արտաքին մակերեսով (22.0 քմ ներքին մակերեսով) բնակելի նշանակության ավտոտնակի նկատմամբ ճանաչել Ալավերդի համայնքի սեփականության իրավունքը:
2. Օրինականացնել Ալավերդի քաղաքի Ջրավազան փողոցի արևելյան մասում գտնվող, 1985թ. ինքնակամ կառուցված, 28.0 քմ արտաքին մակերեսով բնակելի նշանակության ավտոտնակը՝ սպասարկման համար զբաղեցրած 0.0028 հա մակերեսով հողամասով:

3. Ալավերդի քաղաքի Ջրավազան փողոցի արևելյան մասում գտնվող բնակելի նշանակության ավտոտնակին տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, N 76/2 փոստային հասցե:
4. Բնակելի նշանակության ավտոտնակի զբաղեցրած 0.0028 հա մակերեսով հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
5. Համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնին. սահմանված ժամկետում դիմել անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Ալավերդու սպասարկման գրասենյակին՝ օրինականացված ավտոտնակի նկատմամբ Ալավերդի համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:
6. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնին. ինքնակամ կառույցն իրականացրած անձին՝ Սարգիս Գևորգի Կիրակոսյանին օրինականացված ավտոտնակը և սպասարկման համար զբաղեցրած հողամաս ուղղակի վաճառքով ձեռք բերելու մասին ներկայացնել գնման նախապատվության գրավոր առաջարկություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ՝ ԱՐԹՈՒՐ ՎԱՐՈՍՅԱՆ

2021թ. հունիսի 25
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ՀՈՒՆԻՍԻ 2021 թվականի N 209-Ա

### 06-022-0023-0002 ԾԱԾԿԱԳՐՈՎ, ՍԻՄՈՆ ԽԱՉԱՏՈՒՐԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ, 0.05237 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԵՆՔԻ ՈՒԺՈՎ ՍԵՓԱԿԱՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, ‹‹Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին›› Հայաստանի Հանրապետության 50-Ն օրենքով, հիմք ընդունելով Սիմոն Խաչատուրի Կիրակոսյանի դիմումը, անձնագրի պատճենը, ժառանգության իրավունքի վկայագիրը, տնտեսական գրքից քաղվածքը, Աքորի գյուղի վարչական ղեկավարի կողմից տրված տեղեկանքը, «ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ» ՍՊ ընկերության կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

1. Վերականգնել Սիմոն Խաչատուրի Կիրակոսյանին ժառանգության իրավունքով պատկանող, Ալավերդի համայնքի Աքորի գյուղում գտնվող, 06-022-0023-0002 ծածկագրով, 0.05237 հա մակերեսով տնամերձ հողամասի հողհատկացման հիմքերը, սեփականության իրավունքը:
2. Նշված հողամասում գտնվող, այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացրած և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող՝ 1950թ. կառուցված բնակելի տունը, խոհանոցը, սան. հանգույցը, անասնագոմը, ավտոտնակը և պարիսպը Հայաստանի Հանրապետության կառավարության 50-Ն օրենքով համարել Սիմոն Խաչատուրի Կիրակոսյանի /ծնված՝ 02.07.1954թ./ սեփականությունը:

3. Ալավերդի համայնքի Աքորի գյուղում գտնվող բնակելի տանը տրամադրել համայնք Ալավերդի, գյուղ Աքորի, 1-ին փողոց, N 32 փոստային հասցե:
4. Շինությունների զբաղեցրած 0.05237 հա մակերեսով հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
5. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
6. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝ ԱՐԹՈՒՐ ՎԱՐՈՍՅԱՆ

2021թ. հունիսի 28

ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ՀՈՒՆԻՍԻ 2021 թվականի N 210-Ն

**ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 5-րդ մասով ***որոշում եմ***՝

1. Ալավերդի համայնքի 2021 թվականի բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունը. Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն բնագավառի ջրամատակարարում (բաժին 06, խումբ3, դաս 1, ծրագիր 51, հ/հ 900262000509) բաժնի հոդված 4213-ում նախատեսված ծախսերից պակասեցնել 100.0 հազ. դրամ և տեղափոխել հոդված 4251:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝** **ԱՐԹՈՒՐ ՎԱՐՈՍՅԱՆ**

2021թ. հունիսի 28
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ՀՈՒՆԻՍԻ 2021 թվականի N 211-Ա

## ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ, հոդվածով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ մասով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, 64-րդ հոդվածի 2-րդ կետով, հիմք ընդունելով Կամո Վոլոդյայի Սիմոնյանի դիմումը, անձնագրերի պատճենները, «ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասերի հատակագծերը, հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի որոշման քաղվածքը, ըստ 09.06.2021թ. «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի կողմից տրամադրված N Թմ. 347 արխիվային քաղվածքի, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

1. Վերականգնել Կամո Վոլոդյայի Սիմոնյանին (ծնված՝ 13.06.1961թ.), Գրետա Արամայիսի Մկրտչյանին (ծնված՝ 06.03.1963թ.), Մարիա Կամոյի Սիմոնյանին (ծնված՝ 09.01.1995թ.), Լիլիթ Կամոյի Սիմոնյանին (ծնված՝ 04.08.1998թ.) բաժնային սեփականության իրավունքով պատկանող՝ ներքհիշյալ

գյուղատնտեսական նշանակության հողամասերի նկատմամբ սեփականության իրավունքը.

1.1 06-022-0248-0008 ծածկագրի տակ գտնվող 0.07833 հա 4-րդ կարգի վարելահողի նկատմամբ.

1.2 06-022-0248-0009 ծածկագրի տակ գտնվող 0.07729 հա 4-րդ կարգի վարելահողի նկատմամբ:

2. Հողամասերի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասերի հատակագծերով:

3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝** **ԱՐԹՈՒՐ ՎԱՐՈՍՅԱՆ**

2021թ. հունիսի 28

ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 ՀՈՒՆԻՍԻ 2021 թվականի N 212-Ա

### ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով, հիմք ընդունելով Սամվել Սուրենի Գրիմբերգի դիմումը, անձնագրի պատճենը, սեփականության իրավունքի N 1159109 վկայականը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

Սամվել Սուրենի Գրիմբերգին սեփականության իրավունքով պատկանող, Ալավերդի քաղաքի Էնգելսի 24 շենքի արևմտյան մասում գտնվող ավտոտնակին տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Էնգելս թաղամաս, N 24-72/1 փոստային հասցե:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝** **ԱՐԹՈՒՐ ՎԱՐՈՍՅԱՆ**

2021թ. հունիսի 29
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 ՀՈՒՆԻՍԻ 2021 թվականի N 213-Ա

### 06-002-0101-0015 ԾԱԾԿԱԳՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՐԴԱՆ ԻՎԱՆԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ, 0.08 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 0.0061 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՎԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ՕՐԵՆՔԻ ՈՒԺՈՎ ՍԵՓԱԿԱՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՆԱՎԱՐՏ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՆՇԱԳԾՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿՈՎ ԳՐԱՆՑԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության 50-Ն օրենքով, հիմք ընդունելով Վարդան Իվանի Մարտիրոսյանի դիմումը, անձնագրի պատճենը, հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 01.12.1993թ. N 20/9 որոշման քաղվածքը, «ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինության հատակագծերը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

1. Ալավերդի քաղաքի Սանահին թաղամասում գտնվող բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասին տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին թաղամաս, 6-րդ փողոց, 1-ին փակուղի, N 7 փոստային հասցե:
2. Վերականգնել Վարդան Իվանի Մարտիրոսյանին պատկանող՝ համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին թաղամաս, 6-րդ փողոց, 1-ին փակուղի, N 7 հասցեում գտնվող (ծածկագիր՝ 06-002-0101-0015) 0.08 հա մակերեսով

բնակավայրերի բնակելի կառուցապատման տնամերձ հողամասի հողհատկացման հիմքերը, սեփականության իրավունքը:

3. Տնամերձ հողամասից ավել օգտագործվող, սահմանազատված 0.0061 հա մակերեսով հողամասը Հայաստանի Հանրապետության 50-Ն օրենքով համարել Վարդան Իվանի Մարտիրոսյանի (ծնված՝ 21.05.1961թ.) սեփականությունը:
4. Հողամասում առկա է, անավարտ, 130.0 քմ արտաքին մակերեսով (108.0 ներքին մակերեսով) բնակելի տուն, որը ենթակա է գրանցման նշագծված տարբերակով:
5. Անշարժ գույքի զբաղեցրած հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
6. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
7. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ՝ ԱՐԹՈՒՐ ՎԱՐՈՍՅԱՆ

2021թ. հունիսի 29
ք. Ալավերդի